ւորի համար, ոտով պիտի քայլենք, անցանք Քէմէր (կամար) քարի արևելեան ստորոտէն, 1 ½ ժ. ի հիւսիս խոնարհելէ յետոյ՝ կանգ առինք մի հռչակաւոր աղբեր մօտ (Աղբուլախ), որ այս զառիվայրի վերայ, մերձ ճանապարհին, մի դիւթիչ ազդեցութիւն ունի խոնչեալ և պասքեալ ճանապարհորդին համար։

Այժմ շատ խոնչեալ եմք, մի քիչ հանգիստ առնեմք, նաև մի քիչ խորհիմք թէ ո՞ւր եմք։—Վանքը յանկոյս ձորոյն հանդէպ մեր 3 ժամ արևելս բարձր կողի մի վերայ տեսանելի է մեզ, իսկ Կապուտ 3 ժամ յարևմուտս՝ Աղբուլախ լերան ի հիւսիս խոնարհած թեւի ետևն թողած եմք։ Արդ՝ երկուստէք խոտաւէտ վայրերէ խոնարհինք ի ձորն, ի հիւսիս արևելս, հասանք խորախոր ձոր մի, չորս ձորերու միացման վայրը՝ մեծ գետի մի չափ աւազան ունեցող գետակս՝ ահռելի խորխորատներէ կազմուած է, զուցէ սորա համար «Վիշապաձոր» անուն ստացած է։

Գետակս միշտ ջրառատ է, այս անտառային և անձրևաշատ լեռներն՝ ջրերն ցմիշտ անպակաս կանեն։

Թողումք որ ջուրս ցերասխ շարունակէ ի հիւսիս արևմուտս իւր ընթացք, մեք շարունակեմք ևս մեր ուղին։ Անցանք ջրէն, կանգնեցանք աջ ափի վերայ, այժմ խիստ խոր տեղ մի եմք կանգնած, մեզ շրջապատած են մեծ ու փոքր անտառակներ, որք զետեղուած են խիստ զառիվայրերու անմատչելի կողերու վերայ, իսկ մատչելի վայրերն ևս սպառող մարդու կացինի հարուածի տակ ընկճուած՝ հազիւ կարող է 3—4 մեթր բողբոջներ արձակել և զուարդադէմ ուղղուիլ յերկինս, բայց յանկարծ մի անխոհեմ կացինի հարուած տապալեց զնա ի գետին դարձեալ։